

# Համայնքի զարգացման դպրոց (ՀԶԴ)

**Քաղաքացիական հասարակության զարգացման կենտրոնը** պատիվ ունի հայտարարելու, որ վերջերս Երևանում բացվել է *Համայնքի զարգացման դպրոց*: Այնտեղ երիտասարդ աղջիկները ու պատանիները ձեռք կբերեն բազմաթիվ անհրաժեշտ մասնագիտական գիտելիքներ, որոնք նրանց կօգնեն հետագա հաջող կարիերայի համար: Նրանք կուսանեն համակարգիչ և անգլերեն, քաղաքացիական կրթություն և մարդու իրավունքներ, բիզնեսի հիմունքներ և ՀԿ-ի կառավարում: Կկազմակերպվեն նաև հանդիպումներ ականավոր մարդկաց հետ: Կիրառործվի մշակութային ծրագիր՝ ներառյալ թանգարանների և ցուցահանդեսների այցելություններ և այլն:

Բացի այն, որ աղջիկներն ու տղաները ձեռք կբերեն մասնագիտական հմտություններ, նրանք նաև կօգտվեն այն լրացուցիչ պարապմունքներից, որոնք կկազմեն **ՔՀԶԿ**-ի անձնակազմի հետ միասին:

**ՔՀԶԿ**-ն բացել է Համայնքի զարգացման դպրոց նաև Սիսիան քաղաքում (Սյունիքի մարզ): Հետագայում պլանավորվում է բացել նմանատիպ դպրոցներ Հայաստանի մյուս մարզերում:

## Նպատակները

### Հեռահար նպատակ

- Աջակցել Հայաստանում աղքատության հաղթահարմանը
- Նվազեցնել մարդկանց վաճառքի (տրաֆիկինգի) մակարդակը երիտասարդության շրջանում

### Կարճատև նպատակ

- Բարելավել երիտասարդության հնարավորությունները զբաղվածության հարցում
- Աջակցել նրանց գտնելու սեփական տեղը փոփոխվող սոցիալական միջավայրում
- Օգնել անապահով ընտանիքների երիտասարդ աղջիկներին և պատանիներին դառնալ ակտիվ քաղաքացիներ /անձեր/

Դպրոցը կօգնի երիտասարդ աղջիկներին և պատանիներին ձեռք բերել այնպիսի աշխատանքային հմտություններ, որոնք պահանջարկ ունեն աշխատանքի շուկայում և կաջակցեն նրանց ներգրավմանը հասարակական գործունեության մեջ: Ծրագիրը կնպաստի նաև երիտասարդության սեփական արժեքների գնահատման մակարդակի բարձրացմանը:

### Շրջանավարտներին կշնորհվեն վկայականներ հետևյալ մասնագիտություններով.

- Համակարգչային օպերատոր
- Քարտուղար-գործավար

- Գրասենյակի ղեկավար
- Քաղաքացիական ծառայող

## Պատմություն

Համայնքի զարգացման դպրոցի ստեղծման համար մի քանի պատճառներ կան: Խորհրդային համակարգի փլուզումից և Հայաստանի անկախության հռչակումից հետո տեղի ունեցած քաղաքական համակարգի և բարոյական արժեքների փոփոխման հետևանքով Հայաստանում կտրուկ փոխվել է սոցիալական, կրթական և տնտեսական իրավիճակը: Շուկայական տնտեսության անցման պատճառով բարձրագույն կրթությունը հիմնականում դարձել է վճարովի: Անվճար կրթություն ձեռք բերելը այլևս հասանելի չէ հասարակության բոլոր խավերին, քանի որ սահմանված պետական պատվերի ծավալը տարեցուարի նվազում է:

Անապահով և ցածր եկամուտ ունեցող ընտանիքները հնարավորություն չունեն վարձել մասնավոր դասախոսներ իրենց երեխաների պատշաճ կրթությունն ապահովելու համար: Որպես արդյունք՝ այդ երեխաները (17-25 տարեկան) հնարավորություն չունեն շարունակել իրենց ուսումը և ստանալ համապատասխան մասնագիտական գիտելիքներ հետագայում աշխատանքի տեղավորվելու համար:

Արդյունքում նրանք կորցնում են ինքնահարգանքը և վստահությունը սեփական ուժերի նկատմամբ և աղքատության ու հուսալքվածության պատճառով հաճախ դիմում են մարմնավաճառության և մուրացկանության՝ որպես գումար վաստակելու միակ հնարավորություն: Շատ դեպքերում աղջիկները և պատանիները դառնում են մարդկանց առք-վաճառքի (տրաֆիկինգի) գոհ,որը դարձել է մեր հասարակության աճող մտահոգության առարկա: Մյուս կողմից նրանց մեկուսացումը հասարակությունից և սոցիալական անկումը կյանքում շատ հաճախ բերում է նրան, որ աղջիկները և պատանիները դուրս են մղվում որևէ քաղաքացիական գործունեությունից և գնալով մեկուսացումը ավելի խորանում է:

**ՔՀԶԿ-ն** համարում է, որ **“Համայնքի զարգացման դպրոց”** ծրագիրը շատ կարևոր է Հայասնատի հասարակության համար



**ՔՀԶԿ-ն պատրաստ է կապեր հաստատելու և համագործակցելու և տեղեկան և միջազգային շահագրգիռ կազմակերպությունների հետ:**

Փոստային հասցեն. Նալբանդյան 49,#7  
0025 Երևան, Հայաստան  
Գրասենյակի հասցեն. Աղայան15,# 17  
0009 Երևան, Հայաստան  
Հեռ. (374-10) 560 544  
Ֆաքս. (374-10) 585 677  
Էլ.-փոստ: info@cdcs.am  
Website: <http://www.cdcs.am>

# Համայնքի զարգացման դպրոց

